

ամբոխ, խռովութիւն և հակառակութիւններ կ'ըլլան: Երբ թշնամանքներ տեղի կ'ունենան, ըսէ ինծի, ի՞նչպէս կ'ակնկալես որ հոգեւոր բարիք քաղես այս սեղանին մօտենալով:

Բաւական չէ՞ արդէն որ մեղքով կը մօտենանք, բայց մեղի ընծայուած այս պատեհութիւնէն անգամ չենք կրնար օգտուել առանց սխալանքի, և զիրար կը խանենք և կ'աքացենք. ինչո՞ւ կը մօտենաս, ով մարդ, ինչո՞ւ կը փութաս զենուող ոչ խարը տեսնել: Ըսէ ինծի, եթէ ամբողջ գիշերը այս զենումը տեսնէիր, (կարեւոր) ի՞նչ բանէ ետ պիտի մնայիր: Ամբողջ օրը համբերեցիր, և գիշերուան կարեւոր մէկ մասը սպասեցիր, այսքան յոգնութիւն մէկ վայրկեանի մէջ կ'ուզես վատնել: Մտածէ, ի՞նչ է քու զիմացող կատարուողը, ուրկէ՞ այս զենումը իր պատճառը կառնէ — քու փրկութենէդ: Զինուեցաւ քեզի՞ համար, և դուն կը լքե՞ս զԱյն ճիշդ Անոր զենուած ատեն:

Ուր որ է ինկածը՝ արծիւներ հոն կը հաւաքուին. իսկ մենք ոչ թէ արծիւներու պէս՝ այլ շուներու պէս կը մօտենանք. այսքան անամօթութիւն և այսքան հակառակութիւն կայ մեր մէջ: Հասկցիր թէ ի՞նչ է այստեղ թափուածը — արիւն, որ քու հոգիդ մաքրեց, որ աղտոյ լուաց և որ (չարին) իշխանութիւնը խայտառակեց . . .

Եւ արդ քանի որ այսքան բարիք վայելցինք, մեր անձերը սրբենք մեր կարողութեան չափով, մարմնի և հոգիի ամէն պղծութենէ: Քաղցր վարք ու բարք ունենանք, մաքուր միտք, պարկեշտ կենցաղ: Մեր ընկերներուն հանդէպ՝ սէր և խոնարհութիւն, աղքատներուն նկատմամբ՝ գութ և ողորմութիւն: Մեր անձերը արժանի ընենք մեղի ընծայուած բարի պարգևներուն. որպէսզի երկինքի արքայութեան ալ արժանի ըլլանք, մեր Տիրոջ և փրկիչ Յիսուս Բրիտանի շնորհքով և մարդասիրութեամբ. Որուն հետ Հօր և Ա. Հոգիին փառք և պատիւ յաւիտեանս:



ԲԱՆԵՍՄԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ա) — ՆԵՐԲՈՂՆԵՐ ԵՒ ՏԱՂԵՐ

Այնուհետեւ՝ որ նոյնպէս կարեւոր է, ֆիզիքական գեղեցկութեան հետ միասին, ճիշդ է, հոգեւոր գեղեցկութիւնն է նարեկացին առաւելապէս զրօնորում, բայց այդ հոգեւորը նրա մօտ իր վերացական, անորոշ աստուածայինի կերպարը մասամբ կ'որոշուի է, փոխարինուելով կոնկրետ մարդկայինով, և Աստուածածինը փաստօրէն ներբողուում է իբրեւ մարդկային ամենաազնիւ զգացմունքների մարմնաւորում:

«Ապարանից խաչի պատմութիւնից» անկախ՝ նարեկացու առաքեալներին և Յակոբ Մծբնայ եպիսկոպոսին նուիրուած ներբողները («Տիեզերաց ծագիկք», «Բարձրացիր Սիրիւ . . .»), որոնք յայտնի չէ, թէ ինչ առիթներով են գրուած, աւելի հոնատորական, խոհական բնոյթ ունեն. Դրանք գրուած են սառը ակադեմիզմով և նախորդ երկուսի նման աչքի չեն ընկնում յուզական յագեցուածութեամբ: Յամենայն դէպս այս անգամ էլ նարեկացին մնացել է միանգամայն ինքնուրոյն և իր ընդհանուր ոճի մէջ հետեողական: Նա իր ներբողները ծառայական կախման մէջ չի դնում կրօնական գրքերից և չի գարծնում լոկ նրանց բովանդակութեան յարասութիւններ: Այս ներբողներում թէպէտ բանաստեղծական ներքին բուռն ոգևորութիւն չի զգացուում, բայց և այնպէս խոհերը գարծնալ արտայայտում են անկաշկանդ ու սահուն և այնպիսի ձեւերով, որոնք, կարծես թէ, բանաստեղծի նախապատրաստական վարժութիւնները լինեն՝ իր գլուխ գործոցը գրելուց առաջ: Այսպէս՝ սրանց մէջ էլ յաճախ են հանդիպում խօսքին երաժշտականութիւն տուող բաղաձայնները, որքան նա սիրում է ծովի պատկերը և գրանից՝ «Մ» բաղաձայնով հարուստ բառերի կուտակումները: Ահա այդպիսի մի նմուշ ևս՝ Յակոբ Մծբնայ եպիսկոպոսին նուիրուած ներբողից.

Այս ծով մեծ լիածիր եւ յօգնատարած,
Տիեզերագրաւ բոլոր էից զոգ,
Ծնելեաց սեռից անօրոյ ծոց ...⁽¹⁾:

Այնուհետեւ՝ Նարեկացու բոլոր գլը-
ուածքներն էլ, որոնք չեն գրուել յատկա-
պէս իբրեւ չափածոներ, չնորհիւ խօսքի
ուժեղ ուժի կարելի է հետաւելու մտ-
ղաւոր, մանաւանդ, որ նա յաճախ է կի-
րառում ճարտասանական այնպիսի հնարք-
ներ, որոնք ինքնըստինքեան չարագրանքը
չափածոյ են դարձնում. օրինակ՝

Երբ օրհնեաց՝ լցաւ,
Երբ անէժ՝ արձանացաւ,
Երբ գուշակեաց՝ կատարեցաւ,
Երբ մաղբեաց՝ խնկեցաւ,
Երբ նուիրեաց՝ ննմեմեցաւ,
Երբ բանս եղ՝ կառուցաւ⁽²⁾:

Բայց այս ներբողներում խօսքի ուժի
ու երաժշտականութիւնը, ինչպէս Մանգա-
կունու և այլոց ճառերում է նկատուում,
աւելի արուեստական են ու ճիշդ ու ստեղ-
ծուած, քան թէ անմիջապէս ընտելւած են
զգացմունքների ուժից ու հոգեվիճակների
դրամատիկականութիւնից:

Նարեկացու երեք «Գանձերը» բովան-
դակութեան բնոյթով առանձնապէս չեն
տարբերուում ներբողներից: Բանասէրներից
ոմանց կարծիքով, «գանձ» բառը իբրեւ
բանաստեղծութեան մի տեսակի անուն
ծագում է պարսկերէն «գանդ» բառից, որը
նշանակում է կրօնական երգ, իսկ ոմանց
կարծիքով էլ «գանձ» բառը պէտք է հաս-
կանալ իբրեւ հայերէն բառ իր ուղղակի ի-
մաստով: Նարեկացին իր բոլոր «Գանձերը»
սկսում է հէնց այդ բառով, որի սկզբնա-
տառը միաժամանակ իր անուան սկզբնա-
տառն է. այնուհետեւ նա յաջորդաբար հատ-
ուածները այնպիսի բառերով է սկսում,
որոնց սկզբնատառերը միասին կարդացւում
են «Գրիգորի երգ»: Այսպիսով՝ թէպէտ
Նարեկացին իր գանձերը սկսում է «Գանձ»
բառով, բայց ինքը դրանք փաստօրէն կո-
չում է «երգ», ուրեմն հաւանական է ա-
ւելի, որ «գանձ»ը նա գործածել է ոչ թէ
բառացի, այլ հոգեւոր երգի իմաստով:

Սովորաբար «գանձ» կոչուած հոգեւոր

երգերը երգւում էին ժամերգութեան որոշ-
եալ միջոցին և պարունակում էին խնդր-
ուածքներ, բայց Նարեկացու նման գործերը
աւելի ներբողների են մօտենում, որովհե-
տեւ խնդրուածքը շատ քիչ տեղ է բռնում
նրանցից երկուսի մէջ («Գանձ ի գալուստ
սուրբ հոգոյն» և «Գանձ ի սուրբ խաչն Աս-
տուածընկալ»), իսկ երրորդի մէջ («Գանձ ի
սուրբ եկեղեցի») այդ բանը աննկատելի է:

Որքան էլ Նարեկացու մինչև այժմ
յիշատակած գործերը ինքնատիպ են և
հետեւ սովորականից, բայց և այնպէս
նրանք վերաբերում են եկեղեցական գրա-
կանութեան և գրուած են եկեղեցու կա-
րիքների համար: Դրանք թէպէտ գերծ են
նեղ դաւանաբանական նպատակադրումնե-
րից, բայց և դեռ եկեղեցու անմիջական
պահանջմունքներից անջատուած գրակա-
նութեան նմուշներ էլ չեն:

II

Նարեկացին հայ գրականութեան պատ-
մութեան մէջ նոր դարագլուխ է բաց ա-
նում իր տաղերով ու «Ողբերգութեան
մատեան» լիրիկական պոէմով: Նա առա-
ջինն է մեր մեծ բանաստեղծներից, որ
գրականութեան մէջ լիրիկայի ժանրը ազա-
տեց եկեղեցուց ունեցած ենթակայական
կախումից և խիպսեց այն պատկերացնել
անկախ արարողութիւններից՝ իր ինքնու-
րոյն արժէքով ու նպատակներով: Նարե-
կացու տաղերից լաւագոյնները թէ՛ իրենց
խոհական բովանդակութեամբ և թէ՛ պոէ-
տիկական մշակոյթով հայ գրականութեան
մէջ վերածնութեան սկզբնաւորումը նշող՝
լիրիկայի առաջին փայլուն նմուշներն են:

Արդեօք այդ բանաստեղծութիւններն
ինքը Նարեկացի³ն է տաղո՞ւ անուանել թէ
դա հետագայ դարերի գրիչների ձեռքի
գործն է, դժուար է ճշգրտէն որոշել: Քանի
որ Նարեկացուց բաւական յետոյ ապրած
բանաստեղծները՝ մինչև Թլկուրացին այդ
արտայայտութիւնը իբր բանաստեղծութեան
տեսակ չեն գործածում (օրինակ՝ Յրիկը իր
բանաստեղծութիւնները «բան» է կոչում և
ոչ թէ «տաղ») և, որ աւելի հետաքրքրա-
կան է, նրա տաղաչառքի բանաստեղծու-
թիւններից մէկը (քառասունից տաղը) ակ-
րոստիքոս է ու տողագլխի բառերի առա-

(1) Նոյն, էջ 446: (2) Նոյն, էջ 445:

ընդամենը միասին կարգացում են «Գրիգորի է երգս այս», ապա այս և նման այլ հանգամանքները գալիս են ասելու, թե հաւանաբար նարեկացին իր բանաստեղծութիւնները ուղղակի կոչել է «երգ» և ոչ թէ «տաղ» (որը, ի հարկէ, հէնց երգ է նշանակում)։ Ի միջի այլոց, այս կարծիքին իբր ապացոյց կարելի է բերել օրինակներ և Շնորհալու ստեղծագործութիւններից։ 1820 թուին «Իմանք չափաւ» վերնագրով վեհատիւում հրատարակուած նրա երկերի ժողովածուի մի բաժինը վերնագրուած է «Տեառն ներսիսի տաղք»։ Այդ բաժնում եղած «տաղերի» մեծ մասը ակրոստիքոսներ են, որոնց տնալիսի կամ տողալիսի բառերի առաջին տառերը ոչ մի դէպքում «տաղ» բառ չեն յօդուած, այլ նարեկացու ակրոստիքոսների նման կազմուած են «երգ» բառը, երբեմն էլ «բան» բառը (էջ 370-371 «Ներսիսի է այս երգ», էջ 375-376 «երգ ներսիսի այս է», էջ 404-405 «Ներսիսի երգ»), ուրեմն «տաղ» բառը հրատարակչները վերցրել են յետագայ ձեռագրերից։

Նարեկացին առաջինն է մեր քանաստեղծներից, որ չարականների հեղինակներից հիմնովին տարբերուելով՝ արժէքաւորեց ու երգեց բնութիւնը եւ մարդուն, մարդու հոգեկան և ֆիզիքական գեղեցկութիւններն ու նրա ստեղծագործ աշխատանքը։ Ս. Գրեքիրն նմանողութիւնը, յարասութիւնը և դաւանաբանական հարցերը բոլորովին դուրս են մնացել նրա լաւագոյն տաղերից։ Նա ստեղծագործում է զարմանալիօրէն ազատ, անտեսելով եկեղեցական դոգմաների կաշկանդիչ շղթաները։ Բովանդակութեան հարցում դոգմաների անտեսումը բաց է անում և քանաստեղծի լեզուն, նրա լեզուն, որ նոյնիսկ ներբողներում ազատ էր պաշտօնական դարձած շատ ֆրազներից, այժմ ձեռք է բերում արդէն մի անսահման թռիչք. վերանում են առանձին բառերի դաւանաբանական կապակցութիւնները, և առաջանում են նոր բառաստեղծման ամենալայն հնարաւորութիւններ։

Նարեկացու լաւագոյն տաղերը թէպէտ արտաքուստ դեռ որոշ կրօնական թեմաներ են ակնարկում, բայց զբաղւել իրենց գաղափարական էութեամբ հոգևոր բանաստեղծութիւններ չեն։ Նրա երկերի 1840 թուի

վեհատիկեան հրատարակութեան մէջ տաղերը (որոնց մի նշանակալի մասը չի մտել այդ ժողովածուի մէջ) դասաւորութեան են ինթարկուած ըստ վերնագրերի ցոյց առած թեմաների. սկզբում գրուած են «Մենդեան» կոչուած տաղերը, ապա գալիս են՝ «Յայտնութեան», «Քառասնիցն», «Երարութիւնն Ղաղարու», «Յարութեան», «Համարձման», «Գալստեան Նոգոյն», «Եկեղեցոյն» և «Վարդավառին» տաղերը։ Ինչպէս երևում է, այս դասաւորութիւնը յարմարեցուած է Աւետարանի բովանդակութեան ընթացքին։ Բայց այստեղ հարցական է, թէ նարեկացուն են արդեօք այդ վերնագրերը, այնուհետև՝ նարեկացին ինքն էլ իր տաղերին որոշ դասաւորութիւն տուել է թէ ոչ։ Այս հարցերը դժուար է պարզել բանաստեղծի ժամանակակից ձեռագրերի բացակայութեան պատճառով։ Զանազան ձեռագրերում եղած նարեկացու տաղերի վերնագրերը բոլորովին իրարից տարբերուած են, ինչպէս և տարբերուած են յիշեալ հրատարակութեան վերնագրերից, մի բան՝ որ ապացուցում է թէ դրանք նարեկացուն չեն։ Օրինակ, Հայկական ՍՍՌ Մատենադարանի թիւ 425 ձեռագրում (որը գանձաւան է և գրուած է 1466 թուին) գտնուող նարեկացու ութ բանաստեղծութիւններն ունեն այսպիսի վերնագրեր. «Յորդոր» («Սիաւ եմ գեղեցիկ . . .»), «Տաղ» («Աչքն ծով ծով . . .»), «Տաղ աղնիւ» («Եին աջոյ աջոյ ձեռին . . .»), «Մեղեդի եկեղեցոյ» («Երգ զարմանալի . . .»), «Մեղեդի յարութեան» («Ես ձայն զառուծուն ասեմ . . .»), «Մեղեդի անոյշ» («Հաւուն հաւուն արթնացեալ . . .»), «Մեղեդի ի Գրիգոր նարեկացոյն» («Սէր յառաւօտէ սէր յառաւօտէ . . .»), «Տաղ աղնիւ նարեկացոյ» («Աւետիս մեծ խորհրդոյ . . .»)։ Սակայն եթէ նոյնիսկ ընդունենք էլ, որ 1840 թուի հրատարակութեան մէջ նշուած բոլոր վերնագրերն էլ նարեկացուն են, զբանով հարցը բնաւ չի փոխուած։ Յայտնի բան է, որ, ասենք, խալիկան վերածնութեան շրջանի նկարիչների և քանդակագործների ամենափայլուն դէմքերի գլուխ գործոցներից շատերի թեման վերցուած է Աստուածաշնչից կամ Աւետարանից (ինչպէս՝ Միքէլ Անջէլոյի «Մովսէսը» և «Դաւիթը», Ռաֆայէլի Մագոննաները, և այլն), բայց հէնց այդ

թեմաներով գործերում նրանք վառ կերպով արտայայտել են վերածնություն հումանիտական արամագրությունները և հակաֆեոդալական քաղաքական իդէալները:

Նարեկացու լաւագոյն տաղերը արտացոլում են Ժ. դարում հասարակութեան մէջ առաջացած հումանիտական արամագրություններն ու մտածողութիւնը: Որովհետեւ արժէքաւորում է իրական աշխարհն ու կեանքը, բնականաբար բանաստեղծութեան նիւթ պիտի դառնային բնութիւնն ու մարդը: Նարեկացու տաղերը ամէնից առաջ բնութեան պաշտամունքի երգեր են. բանաստեղծը հիացած է աշխարհի բնական գեղեցկութիւններով, և այդ հիացմունքը յիշեցնում է բնութեան հեթանոսական զգացողութիւնը: Որովհետեւ նա ձգտում է իր հիացմունքին հաղորդակից դարձնել ընթերցողին և սէր վարթեցնել նրա մէջ դէպի բնութիւնը, ուստի երգում է այն պահը, երբ դարուն է, ժպտում է արեւը, երբ ամէն քայլափոխին զգացում է կեանքի վերածնունդը: «Յայտնութեան» տաղում նա ոգեւորում է ժողովրդական աւետիսների ձևով, ողջունում է փարթաւօրէն աճած ծառերին ու ծաղիկներին, յորդ աղբիւրների ու վտակների կարկաշատն ջրերին:

Աւետիս ծառոց ծաղկանց
Բողբոջախիս խիսաւաղար,
Դոյն գեղեցիկ պսղինաւե
Ակնահանոյ համ Բաղբոյնակ,
Հոս բուրազուար փունջ խուռներամ
Ծայրից վարդից փքրինաղար
Թերք սարածեալ ոսկեմանանջ
Տերեւախիս կանաչացեալ...:
Աւետիս այդ Յովանեա
Յորդ աղբերաց հոյլ վսակաց
Ջուր մանուածոյ ծիծաղ ծաւալ,
Կարկաշահոս ուխինհոս,
Ծայրինաւե մանուածուալ
Երջանապսոյս ման աւագին.
Հոլով խորոց մեք մեք զուգին.
Վայր վեր անէջ վեր վայր ի վեր՝
Փուրան ի ջուրան Յորդանանու ... (1):

Բանաստեղծութեան իդէան այստեղ հրաշալի մարմնաւորում է ստացել համապատասխան ձևի մէջ. Նարեկացին հանդէս է բերել մի գարմանալի նրբանկատութիւն՝

վեր հանելու բնութեան մէջ եղած իրերի գոյների գեղագիտական հանդիպողութիւնները, որոնց ամենանուրբ երանգներն անգամ չեն վրիպում նրա տեսողութիւնից: Եթէ նա նկարագրում է կանաչած «բողբոջախիս», օխտասողարթ ծառերը, ապա այդ համատարած կանաչութեան գեղեցկութիւնն աւելի է պայծառանում ակնահաճոյ, քաղցրունակ պտուղների գոյնի ընդմիջումով, իսկ եթէ խօսքը ծաղիկների մասին է, ապա այդ կանաչից դուրս է ցայտում փթթած վարդի վառ կարմիրը, և գոյների պոէզիան կատարեալ է դառնում: Եթէ յորդ աղբիւրներ ու վտակներ են նկարագրում, ապա այստեղ ոչ միայն ջրերի «ծիծաղ ծաւալ» բեկբեկուն լսյսի խաղն է զգացում, այլև թւում է, թէ երևում է «մանուածոյ» ջրերի վէտվէտուն ընթացքը և լսում է ուրախ կարկաշ: Սակայն բնութեան պաշտամունքի գեղարուեստական ամենափառահեղ արտայայտութիւնը մեր գրականութեան մէջ Նարեկացու «Վարդավառի» կոչուած տաղն է, որը անկարելի է այստեղ ամբողջութեամբ մէջ չբերել:

Դոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից:
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համասարած ծովէն
պղպղէր գոյնն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին
Շողջողէր պսուղն ի նդին:
Քրբում վակասիր պսուղն
սնանէր խուռն տերեւով.
Տերեւն տալիլ տուղին
գոր երգէր Դաւիթ հրաւալին:
Ի փունջ խուռներամ վարդից
գոյնըզգոյն ծաղկունք ծաղկեցան:
Այդ սոս ու սոսախ ծառերդ
վարդագոյն ոսս արձակեցին:
Այդ կոն ու բողբոջ սարուսդ,
գարդ առեալ վարդն շուտանին.
Շուտանն շողէր յովսին
Շողջողէր գեմ արեգականն,
Այն հիւսիսային հաւեն,
հով հարեալ զոհար շուտանին,
Յայն հարաւային լեռնէն,
հաղբ օղով ցօլէր շուտանին,
Շուտանն շաղով լցեալ
Շող շաղով եւ օար մարգարսով,

(1) Մատենագրութիւնք, էջ 467 - 468:

Ծաղկունեից ամեն ծաղ առին,
 Ծաղն յամպէն ամպն յարեգակնէն,
 Աստղիկ ամեն շուրջ առին,
 Կեմ լուսնին գունդ գունդ բոլորին,
 Գունդ գունդ խաչաձեւ գնդակ,
 յորինուած երկնից շուրջանակ:
 Փառք Հօր եւ Որդւոյն յաւէս
 Սուրբ Հոգւոյն այժմ եւ յաւիտեան⁽¹⁾:

Ամենից առաջ՝ եթէ ձեռնական նշանա-
 կութիւնն ունեցող վերջին տողերը հանենք՝
 տաղում ոչինչ չի մնայ կրօնական որակ
 բան յիշեցնող: Չնայած դա փարզազատիւն
 տալ է կոչում, բայց ոչ նկարագրում է
 վարդապատի տօնը և ոչ էլ կրօնա-փիլի-
 սոփայական խորհրդածութիւնն արւում այդ
 տօնի շուրջը: Ամբողջ բանաստեղծութիւնը
 մի հոյակապ ամբողջութիւն է կազմում,
 որտեղ շօշափելի աշխարհն է՝ ծաղիկների
 ու լոյսի գեղեցկութեան մէջ կենդանի կեր-
 պով զգացում: Բանաստեղծի՝ հանճարեղ
 նկարիչներին յատուկ պատկերաւոր տես-
 դութիւնը ընդգրկել է բնութեան ողջ գե-
 ղեցկութիւնը. այդ գեղեցկութեան պատ-
 կերը՝ արևի պայծառ լոյսով ողողում ու
 հաճելի ջերմութեամբ յագեցած, որից ծո-
 բում են գեփուտի բերած փարձամօրէն
 ծաղկած ծաղիկների անուշ բոյրը և ծա-
 ղիկների վրայ՝ առաւօտեան ցօղիկի թար-
 մութիւնը, մարդկանց մեծ ուժով ձգում է
 դէպի բնութիւնը և առաջացնում է ստեղ-
 ծարար սէր դէպի իրական կեանքը:

Ահա գոհար վարդը վառում է արևի
 վեհ վարսերից, խուռն տերեւների մէջ ճիւղի
 վրայ շողշողում է հասուն պտուղը, բող-
 բոջուն զուարթ սաղարթով պնդուել են
 վարդն ու շուշանը: Հովտում շողում է
 շուշանը, շողշողում է արևի դէմ. հիւսի-
 սային հովը հարում է գոհար շուշանին,
 հարաւային սարից՝ անուշ օդով ցօղում է
 շուշանին. ապա շուշանը լցւում է շար-
 մարգարտանման շող շաղով, բոլոր ծաղիկ-
 ները ցօղում են ամպից, որը ծնուել է
 արևից: Պայծառ օրուան յաջորդում է
 խաղաղ և ոչ պակաս գեղեցիկ գիշերը.
 ծաղիկների գեղեցկութեան ու թովչանքին
 փոխարինում են աստղերը, որոնք գունդ
 գունդ բոլորում են լուսնի շուրջը: Լոյսը,
 դարձեալ լոյսն է ամէն ինչի հմայքը:

Վարդապատի, ինչպէս և ուրիշ տաղեր
 էլ ցոյց են տալիս, որ Նարեկացին բնու-

թիւնը քմարում, զգում և տեսնում է իր
 շարժման և փոփոխութեան մէջ: Նարեկա-
 ցու բանաստեղծական պատկերները բնու-
 թիւնը երբեք չեն ներկայացնում անշարժ
 վիճակում. միշտ մի բան շարժում ու ցար-
 գանում է և ծնում է նորը. այստեղ արևի
 վարսերի վրայ դէպի վեր է ծաւալում
 ծովածաղիկը և սօս ու տօտախ ծառերը
 վարդագոյն ստերի են արձակում: Իսկ այս
 բոլորի ազդեցութեամբ ու սկզբնապատճառը արևն
 է, արևի կենսատու մեծ գօրութիւնը:

Լինելով բնութեան սիրահար, Նարե-
 կացին, բնականաբար, իր բոլոր բանաստեղ-
 ծութիւնների մէջ իր հայեացքներին համա-
 պատասխան՝ դրականը, գեղեցիկը պատկե-
 րելիս՝ պէտք է դիմէր բնութեան օրինակ-
 ներին. և իրօք այդպէս էլ է: Ծմնդեանն
 կոչուած տաղերից մէկում նա երգում է
 մարդկանց դէպի երջանկութիւն մղող ու
 տանող սէրը և այդ սիրոյ երգը, որ նմա-
 նապէս մեր գրականութեան մէջ կատարեալ
 նորութիւն էր, հնչում է միաձուլուած
 բնութեան՝ միշտ իրենց շարժման մէջ ըն-
 կալուող երևոյթների շքեղ պատկերներին:

Ի ծոց ծնողին ծագումն անուն,
 յարգւոյն ծագումն եկեալ ի սեր
 կուսին ծնեալ ծոցոյն ծաղիկ:
 Ծաղիկ ծոցոյ ծոց հայրենի,
 ամպոյ նման իջեալ յերկնից,
 զսեր իւր ի մեզ հաղցրիկ ցօղեալ:
 Սեր ի յամպոյ ամպ սիրաւարժ,
 օդոյն ցօղեալ ի նոյն գեղման,
 վայր իջուցեալ կաթս անձրեւաց:
 Ի սիրոյ սեր ծանուցեալ,
 սիրաբողբօջ սարփամբ լցեալ,
 սիրով ընդ սեր միաբանեալ:
 Լուսինն ի լոյս ի լուսնն եկեալ,
 նոյս նմեւով՝ գիշերավարն
 ըզկնի նեւեւ բարկ ասեղոփ:
 Առաւօտն ցօղիկն իջեալ,
 ի նոր Սինն զձայրսն սուեալ,
 հալցր արեւով արուսեկին:
 Գարունաբեր գարնանաւարժ
 գեղգեղելով երփնազարդեալ,
 նոր հարսանեաց միաբանեալ:
 Եկա՛յք նոր մեք զուարճացեալ,
 վառ ի վառեալ սիւ պալ ի ծալ
 քրփոյն սերել յօրինեցումս⁽²⁾:

(1) Նոյն, էջ 482. (2) Նոյն, էջ 464.

(Շարունակելի՝ 4)